

1915 թ. ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿՈՒՎՆԵՐԻ
ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
Սահակյան Ռ. (ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայաստան)

Բանալի բառեր՝ Օսմանյան կայսրություն, բռնագաղթ, կոտորածներ, ցեղասպանություն, թուրքական պատմագիտություն, արևմտահայություն:

1. Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրության երիտթուրքական կառավարությունն իրականացնում է հայության զանգվածային կոտորածներ և բռնագաղթ՝ ցեղասպանություն: Գտնվելով դժվարին պայմաններում՝ արևմտահայությունը մի շարք վայրերում կարողանում է կազմակերպել դիմադրություն, որը հնարավորություն է տալիս հայերի մի մասին փրկվել, իսկ մյուսներին՝ պատվավոր մահ ընդունել:

2. Հայտնի է, որ ժամանակակից թուրքական պատմագրության համար կարևորագույն թեմաներից մեկն է հայերի ցեղասպանության և ինքնապաշտպանական մարտերի իրական պատմության խեղաթյուրումը: Իրենց հողվածներում, գրքերում և հրապարակային հաղորդումներում նրանք ջանքեր են թափում, որպեսզի հերքեն 1914-1918 թթ. հայերի զանգվածային կոտորածներն ու տեղահանությունը: Այդ նպատակի համար ծախսվում են զգալի նյութական միջոցներ: Հրապարակի վրա գտնվող գրականությունը թարգմանվում է հիմնականում անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ինչպես նաև ռուսերեն լեզուներով: Հակահայ բովանդակությամբ գրականությունը ներկայացված է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի նախագահական գրադարանում:

3. Իր հերթին հիմնահարցի խեղաթյուրումը պաշտոնական մակարդակի է հասցրել Թուրքիայի զինված ուժերի Գլխավոր շտաբը: Նրա կայքէջում տեղադրված են հակահայ թեմայով գրականություն, որից նույնպես հնարավոր է առանց որևէ սահմանափակման

օգտվել: Գլխավոր շտաբի կայքէջում ցուցադրված է նաև այսպես կոչված “Documentation Hall on Armenian Question” («Հայկական հարցի փաստաթղթերի սրահ»):

4. 1915թ. իրադարձություններին, հայ կամավորական խմբերի և ինքնապաշտպանական մարտերի պատմությանն է անդրադարձել թուրք պրոֆեսոր Հիքմեթ Օյզդեմիրը: Գրքի նախաբանի հեղինակն է բրիգադի գեներալ Սուլիա Թանեյրին: Հրատարակությունն իրականացրել է Թուրքիայի Գլխավոր շտաբի Ռազմական պատմության և ռազմավարական հետազոտությունների ուսումնական կենտրոնը:

5. Վերջին տասնամյակում նման հեղինակներից մեկն է հանդիսանում ամերիկացի պաշտոնաթող զինվորական, փոխգնդապետ Էդվարդ Էրիկսոնը: Նա զինվորական ծառայությունը սկսել է 1975 թ. որպես հրետանու սպա: Սակայն, դատելով զբաղեցրած մի շարք պաշտոններից՝ կարելի է ենթադրել, որ նա հանդիսացել է հետախուզության աշխատակից:

Է. Էրիկսոնը հեղինակ է մի շարք աշխատությունների և հոդվածների, որոնք նվիրված են թուրքական բանակին և նրա մղած մարտական գործողություններին: Իր ուսումնասիրություններում ռազմական պատմաբանը զգալի տեղ է հատկացնում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայերի ցեղասպանությանը, իհարկե, հիմնականում հերքելով թուրքերի կողմից իրականացրած հայերի զանգվածային տեղահանությունը և կոտորածը:

6. Ամփոփելով՝ կարող ենք փաստել, որ թուրքական պատմագրությունը, աննշան և ոչ էական փոփոխություններով, շարունակում է խեղաթյուրել 1915 թ. իրադարձությունները՝ արևմտահայերի ցեղասպանությունը և ինքնապաշտպանական մարտերը:

THE 1915 WESTERN ARMENIAN SELF-DEFENCE STRUGGLES'
FALSIFICATION BY TURKISH HISTORIOGRAPHY

Sahakyan R. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of
History, Armenia)